

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՊԱՌԱՄԵՆՏԱՐԻՉՍԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հովհաննես Ստեփանյան

*Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և
իրավունքի ինստիտուտի առաջատար գիտաշխատող*

Հայ ժողովրդին խորթ չեն եղել պառլամենտարիզմի գաղափարները, իսկ պառլամենտարիզմի հիմնական բաղադրիչներն առկա են եղել նրա պետական և հասարակական-քաղաքական կյանքում: Մասնավորապես, Հայաստանում ներկայացուցչական օրենսդիր մարմիններ կազմավորվել ու գործել են հնագույն ժամանակներում, և այդ ավանդույթը հարատևել է ընդհուպ մինչև XX դարը, իսկ իշխանությունների տարանջատման և օրենքի գերակայության գաղափարները հայ քաղաքական-իրավական մտքում հայտնվել են դեռևս XVIII դարում:

Պառլամենտարիզմը, որպես պետական իշխանության կազմակերպման և գործառնման ձև, Հայաստանում առաջին անգամ կյանքի կոչվեց հայկական առաջին հանրապետության կազմավորմամբ: Հայաստանում պառլամենտարիզմի սկզբնավորումն ունի իր նախապատմությունը: Ռուսաստանի 1917 թվականի փետրվարյան հեղափոխությունը ռուսական վիթխարի կայսրությունում իսկական խառնաշփոթ ստեղծեց, որը շուտով վերածվեց քաոսի: Այդ խառնաշփոթն ու քաոսը տարածվեց նաև Անդրկովկասում, բնական է, նաև արևելյան Հայաստանում: Հեղափոխությունից հետո հայ ժողովրդի առջև ծագեցան նոր խնդիրներ, որոնց լուծման անհրաժեշտությունն աշխուժացրեց հայ հասարակական քաղաքական կյանքը:

Ռուսական փետրվարյան հեղափոխությունից հետո կովկասահայ իրականության մեջ գործում էին զանազան քաղաքական կուսակցություններ և հոսանքներ, որոնցից էին 23 Դաշնակցությունը, սոցիալ-դեմոկրատ մենշևիկները, սոցիալ-դեմոկրատ հնչակյանները, սոցիալ-հեղափոխականները՝ էսեռները, բոլշևիկներ, կադետներ,

ռամկավարներ և այլն: 1917 թվականի ապրիլին Թիֆլիսում ստեղծվեց մի նոր ազգային կուսակցություն՝ Հայ ժողովրդական կուսակցությունը: Քաղաքական այդ խայտաբղետ ուժերի և հոսանքների մեջ ամենաազդեցիկ և հեղինակավոր կուսակցությունը ՅՅ Դաշնակցությունն էր:

Հետփետրվարյան ժամանակաշրջանում Անդրկովկասում գործող հայ քաղաքական կուսակցությունները և հոսանքները, բացի, թերևս, բոլշևիկներից գիտակցում էին միմյանց հետ համագործակցելու, հայ ժողովրդին միավորելու և նրա առջև ծառացած բարդ ու դժվարին խնդիրները լուծելու անհրաժեշտությունը: Եվ ահա, 1917 թվականի սեպտեմբերի 29-ին, Թիֆլիսում, որն այդ ժամանակ արևելահայերի հասարակական-քաղաքական կյանքի կենտրոնն էր, հրավիրվեց արևելահայերի համագումարը: Այդ համագումարին մասնակցում էին 203 պատվիրակ: Համագումարում մեծաթիվ էր ՅՅ Դաշնակցության պատվիրակությունը՝ 116: Բոլշևիկյան կազմակերպությունների պատվիրակները չէին մասնակցում արևելահայերի համագումարին՝ ՌՄԴԲԿ Թիֆլիսի կոմիտեն Անաստաս Միկոյանի կողմից ստորագրված հատուկ գրությամբ բոյկոտել էր համագումարը:

Արևելահայերի համագումարն ընտրեց գործադիր մարմին՝ Հայոց Ազգային խորհուրդ, որը կազմված էր տասնհինգ անդամներից: Ազգային խորհուրդն ուներ ներկայացուցչական բնույթ: Նրանում ներկայացված էին Անդրկովկասում գործող համարյա քոլոր հայ քաղաքական ուժերը:

Արևելահայերի համագումարից մի քանի շաբաթ անց՝ 1917 թվականի հոկտեմբերի 25-ին, Ռուսաստանի մայրաքաղաք Պետրոգրադում բոլշևիկները զինված հեղաշրջում կատարեցին և բռնազավթեցին իշխանությունը, որից հետո երկրի հասարակական-քաղաքական կյանքը սկսեց կազմալուծվել: Այնուհետև ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Անդրկովկասում քաղաքական իրադարձությունները սրընթաց զարգացան: 1917 թվականի նոյեմբերի 15-ին վրաց մենշևիկները, ՅՅ Դաշնակցությունը և ադրբեջանցի մուսավաթականները կազմեցին կառավարություն՝ Անդրկովկասյան կոմիսարիատը:

Ռուսաստանի խորհրդային կառավարության կողմից Կովկասյան ռազմաճակատը կազմալուծվեց, և կարճ ժամանակահատվածում թուրքական բանակը գրավեց ոչ միայն ողջ Արևմտյան Հայաստանը,

այլև ներխուժեց Անդրկովկաս: Անդրկովկասյան Սեյմն անկարող գտնվեց կասեցնելու թուրքերի առաջխաղացումը: 1918 թվականի ապրիլի 22-ին Անդրկովկասյան Սեյմը Անդրկովկասն անկախ հռչակեց: Անդրկովկասյան անկախ պետությունը շատ կարճ կյանք ունեցավ: 1918 թվականի մայիսի 26-ին Անդրկովկասյան Սեյմը լուծարվեց, և նույն օրը հայտարարվեց Վրաստանի անկախությունը, իսկ հաջորդ օրը՝ Ադրբեջանի անկախությունը: Ստեղծվեց մի իրավիճակ, որ Հայոց Ազգային խորհուրդն ստիպված էր հայտարարել նաև Հայաստանի անկախությունը: Ստիպված էր, որովհետև Վրաստանը և Ադրբեջանը պատրաստ էին իրենց գերիշխանությունը հաստատել Արևելահայաստանի վրա, բացի այդ, Անդրկովկասի բոլոր հայ քաղաքական ուժերը չէին, որ հավանություն էին տալիս Հայաստանի անկախությանը: Անկախությանը, բնականաբար, դեմ էին բոլշևիկները, ինչպես նաև ՄԴ Հնչակյան կուսակցությունը, և նույնիսկ մի շարք դաշնակցականներ:

Ստեղծված աշխարհաքաղաքական պայմաններում Հայաստանի անկախության հռչակումը միակ ճիշտ քայլն էր, որն ամրապնդվեց թուրքերի նկատմամբ 1918 թվականի մայիսի վերջին հայ ժողովրդի փառավոր հաղթանակներով՝ Մարդարապատում, Ղարաբաղի սպայում և Բաշ-Ապարանում:

Հռչակելով Հայաստանի անկախությունը՝ Հայոց Ազգային խորհուրդը հետաձգեց կառավարություն կազմելը, այնուամենայնիվ՝ 23 Դաշնակցությունն առաջադրեց վարչապետի իր թեկնածությունը՝ Հովհաննես Քաջազնունուն: 1918 թվականի հունիսի 7-ին Հայոց Ազգային խորհուրդը Հովհաննես Քաջազնունուն ընտրեց վարչապետ և նրան հանձնարարեց կազմել կռալիցիոն կառավարություն: Սակայն անդրանիկ կառավարություն կազմելու հարցում հայ քաղաքական ուժերի միջև առաջացան տարաձայնություններ և բախումներ: Ի վերջո, կառավարությունը կազմվեց ոչ թե կռալիցիոն, այլ անհատական սկզբունքով: Հայաստանի կառավարության կազմում ընդգրկվեցին չորս դաշնակցական և երկու անկուսակցական:

Հայոց Ազգային խորհուրդը և կառավարությունը 1918 թվականի հուլիսի 17-ին տեղափոխեցին Երևան: Փաստորեն, Հայաստանի անկախության հռչակումից հետո Հայոց Ազգային խորհուրդը, որպես Հայաստանի գերագույն իշխանություն, ձևավորեց Հայաստանի գործադիր իշխանությունը: Սակայն անհրաժեշտ էր ձևավորել նաև

լեզվիտիմ օրենսդիր և դատական իշխանություններ: Ստեղծված աշխարհաքաղաքական ծանր պայմաններում համաժողովրդական ընտրությունների միջոցով Հայաստանի ներկայացուցչական օրենսդիր մարմին ձևավորելը գործնականում անհնար էր: Այդ պատճառով Հայոց Ազգային խորհուրդը որոշեց Հայաստանի օրենսդիր մարմինը պառլամենտը ձևավորել իր մեջ մտնող կուսակցությունների ներկայացուցիչների թիվը եռապատկելու, ինչպես նաև Հայաստանում բնակվող ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին ընդգրկելու միջոցով: 1918 թվականի հուլիսի վերջերին Հայոց Ազգային խորհուրդը վերածվեց Հայաստանի խորհրդի՝ պառլամենտի, որը բաղկացած էր 46 պատգամավորներից: Հայաստանի խորհրդում 23 դաշնակցությունն ուներ 18 պատգամավոր, Հայաստանի ժողովրդական կուսակցությունը, սոցիալ դեմոկրատները և սոցիալ-հեղափոխականները (էսէռներ) վեցական պատգամավոր, թուրք-հեղափոխականները (էսէռներ) վեցական պատգամավոր, թուրք-թաթարները վեց պատգամավոր, ռուսները և եզդիները մեկական պատգամավոր: Սոցիալ-դեմոկրատների վեց պատգամավորներից հինգը մենշևիկներ էին և մեկը՝ բոլշևիկ: Հետագայում՝ 1918 թվականի նոյեմբերին բոլշևիկ պատգամավորը դուրս եկավ Հայաստանի խորհրդից, և նրա տեղը լրացվեց մենշևիկ պատգամավորով: Ինչպես տեսնում ենք, Հայաստանի խորհրդում ընդգրկված էին տարբեր քաղաքական ուժեր, որոնցից ոչ մեկը մեծամասնություն չէր կազմում, բացի այդ նրանում ընգրկված էին Հայաստանում բնակվող տարբեր ազգերի ներկայացուցիչներ: Այդ տեսակետից կարելի է ասել, որ Հայաստանի խորհուրդը ներկայացուցչական և լեզվետիմ օրենսդիր մարմին էր:

1918 թվականի օգոստոսի 1-ին Երևանում տեղի ունեցավ Հայաստանի խորհրդի առաջին պաշտոնական նիստը: Փաստորեն, այդ օրը իրավաբանորեն ծնունդ առավ հայկական պառլամենտը և պառլամենտարիզմը: Հարկ է նշել, որ Հայաստանի առաջին պառլամենտությունում պառլամենտարիզմի զարգացումն ունեցել է հանրապետությունում պառլամենտարիզմի զարգացումն ունեցել է երկու փուլ: Առաջին՝ նախնական փուլն ընդգրկում է 1918 թվականի օգոստոսի 1-ից մինչև 1919 թվականի օգոստոսի 1-ը, որը համընկնում է Հայաստանի խորհրդի գործունեության ժամանակաշրջանի հետ: Երկրորդ փուլն ընդգրկում է 1919 թվականի օգոստոսի մեկից մինչև 1920 թվականի դեկտեմբերի երկուսը, որը համընկնում է

համընդհանուր ընտրություններով ձևավորված՝ Հայաստանի պառլամենտի գործունեության ժամանակաշրջանի հետ:

Հայաստանի խորհուրդը մշակեց և հաստատեց իր կանոնակարգը, ստեղծեց տասնչորս հանձնաժողովներ, որոնցում առանձնանում էր հատկապես Կարգադրիչ հանձնաժողովը: Այս հանձնաժողովն իրականացնում էր գործադիր մարմնի գործառույթներ: Հայաստանի խորհուրդն ստեղծեց նաև Պետական վերահսկողության մարմին, որը կոչված էր վերահսկողություն իրականացնել կառավարության ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ:

Հայաստանի խորհրդի կազմավորման և գործունեության ընթացքում ի հայտ եկավ պառլամենտարիզմի այնպիսի մի կարևոր տարր, ինչպիսին է բազմակուսակցականությունը: Վերը նշեցինք, որ Հայաստանի խորհրդում ներկայացված էին չորս կուսակցություններ՝ ՀՅ Դաշնակցությունը, Հայ ժողովրդական կուսակցությունը, սոցիալ-դեմոկրատները (մենշինիկներ և բոլշևիկ), սոցիալ-հեղափոխականները (եւեռներ), ինչպես նաև ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ: Հայաստանի խորհրդի երկու պատգամավոր անկուսակցական էին: Փաստորեն, Հայաստանի խորհրդում կային չորս կուսակցական խմբակցություններ, երեք ազգային խմբակցություններ և մեկ անկուսակցական խմբակցություն:

Հայաստանի խորհրդի խմբակցությունները կարևոր դերակատարություն ունեին ինչպես օրենսդիր աշխատանքում, այնպես էլ երկրի ներքին և արտաքին քաղաքականությունը մշակելու գործում: Սակայն քանի որ նշված խմբակցություններից յուրաքանչյուրն ուներ իր նպատակները, խնդիրներն ու ծրագրերը, որոնք հաճախ տրամագծորեն հակադիր էին, ապա ակնհայտ է, թե Հայաստանի խորհրդում ինչ անզիջում պայքար էր ընթանում ցանկացած հարցի քննարկման ընթացքում:

Հայաստանի խորհրդի պատմագիտական և քաղաքագիտական վերլուծություններում ըստ քաղաքական կողմնորոշումների և հետապնդած նպատակների առանձնացվում են երեք քաղաքական ուժեր՝ աջակողմյան, կենտրոնամետ և ձախակողմյան: Հայաստանի խորհրդում ներկայացված կուսակցություններից Հայ ժողովրդական կուսակցությունն աջակողմյան էր, ՀՅ Դաշնակցությունը՝

կենտրոնամետ, իսկ սոցիալ-դեմոկրատները և էսեռները՝ ձախակողմյան¹:

Հայ ժողովրդական կուսակցությունը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման հիմք էր համարում մասնավոր սեփականությունը և շուկայական հարաբերությունները, իսկ հայկական հարցում դավանում էր ծովից ծով Հայաստանի գաղափարը: Այս կուսակցության բարձրագույն ղեկավար մարմինը՝ Կենտրոնական կոմիտեն գտնվում էր Թիֆլիսում, և այդպիսով, ըստ էության ստեղծվում էր կուսակցության երկու հատված՝ Թիֆլիսյան և Երևանյան: Այս հանգամանքը դժվարացնում էր կուսակցության երկու հատվածների միասնական ղեկավարումը, և պատահական չէ, որ շուտով կուսակցության երկու հատվածների միջև առաջացան որոշակի տարաձայնություններ²: Հայ ժողովրդական կուսակցությունը, ընդհանուր առմամբ, բնութագրվում է որպես ազգային կուսակցություն, որն ընդունելով ազգային շահերի գերակայությունը, հանդես էր գալիս հայ ժողովրդի շահերի և իրավունքների պաշտպանությամբ³:

ՀՀ Դաշնակցությունը, որը կենտրոնամետ էր, դավանում էր հայության և հայրենիքի պաշտպանության, անկախության և պետության ամրապնդման գաղափարը: ՀՀ Դաշնակցությունն իր քաղաքական նպատակներով մոտ էր Հայ ժողովրդական կուսակցությանը, սակայն մի շարք սոցիալ-տնտեսական հարցերում գաղափարական առումով հարում էր սոցիալ-դեմոկրատներին և սոցիալիստներին⁴:

Հայաստանի խորհրդում ձախակողմյան կուսակցություններ էին սոցիալ-դեմոկրատները՝ մենշևիկ և բոլշևիկ, ինչպես նաև էսեռները: Նրանք դավանում էին Հայաստանի անկախությունը մերժող, ինչպես և ընդգծված սոցիալիստական գաղափարներ: Այս կուսակցությունները բնութագրվում են որպես քաղաքական այնպիսի ուժեր, որոնց խորթ են եղել «Հայաստան, հայրենիք, սահման,

¹ Հակոբյան Ա., Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները 1918-1920 թվականներին, Եր., 2006, էջ 61:

² Նույն տեղում, էջ 63:

³ Նույն տեղում, էջ 65:

⁴ Հակոբյան Ա., Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները 1918-1920 թվականներին, Եր., 2006, էջ 66:

ազատություն, անկախություն, պետականություն, ազգային մշակույթ, ազգային բանակ և համանման այլ հասկացություններ»⁵: Եթե հայ սոցիալ-դեմոկրատները եղել են վրաց մենշևիկների կամակատարները և նրանց շահերն արտահայտողները, ապա էսեռներն արտահայտել և պաշտպանել են Ռուսաստանի շահերը, բնականաբար, դեմ լինելով Հայաստանի անկախությանը: Ինչպես հայ սոցիալ-դեմոկրատների, այնպես էլ հայ էսեռների կենտրոնական ղեկավար մարմինները գտնվում էին Հայաստանից դուրս՝ Թիֆլիսում:

Ինչ վերաբերում է Հայաստանի խորհրդի կուսակցական պատկանելիություն չունեցող ազգային փոքրամասնությունները ներկայացնող պատգամավորներին, ապա նրանք, բացառությամբ եզդի պատգամավորի, նույնպես ունեին Հայաստանի անկախությունը մերժող, հակապետական քաղաքական դիրքորոշում:

Հայաստանի խորհրդում ներկայացված կուսակցությունների այս թռուցիկ վերլուծությունը վկայում է, որ չնայած նշված ժամանակաշրջանում Հայաստանը գտնվում էր ներքին և արտաքին բարդ, ծանրագույն պայմաններում, այնուամենայնիվ, հավատարիմ էր ժողովրդավարության սկզբունքներին: Հայաստանի խորհուրդը, որպես պետական իշխանության բարձրագույն մարմին, կազմավորվել և գործում էր ժողովրդավարության սկզբունքների հիման վրա, ինչը պառլամենտարիզմի կայացման պարտադիր պայմաններից մեկն է:

Ժողովրդավարության սկզբունքների հիման վրա կազմավորվեց նաև Հայաստանի նոր կառավարությունը: 1918 թվականի աշնանը Հայ ժողովրդական կուսակցությունը ցանկություն հայտնեց մտնել կառավարության կազմի մեջ և ՀՀ Դաշնակցության հետ կիսել հայրենիքի և պետության առջև պատասխանատվությունը: Այդպիսի ցանկություն ունեին նաև սոցիալ-դեմոկրատները: Վերջիններս, չունենալով համապատասխան սոցիալական բազա, փոխարենն ունեին մեծ ախորժակ՝ պահանջում էին ներքին և արտաքին գործերի նախարարների պաշտոնները: Սոցիալ-հեղափոխականները (էսեռները) ներկայացնում էին իրենց պահանջները: Ի վերջո, սոցիալ-դեմոկրատները և էսեռները հրաժարվեցին կառավարության կազմի մեջ մտնելուց, և նոր կառավարությունը կազմեցին ՀՀ Դաշնակցությունը և Հայ ժողովրդական կուսակցությունը: Նոր

⁵ Նույն տեղում, էջ 70:

կառավարության կազմի մեջ մտան չորս դաշնակցական, չորս ՀԺԿ-ական և մեկ անկուսակցական, ընդամենն ինն անդամ:

Հայաստանի խորհուրդը երկրի սոցիալ-տնտեսական և քաղաքական ծանրագույն պայմաններում ձեռնամուխ եղավ ծրիմաստեղծ աշխատանքի: Հայաստանի անկախության հռչակումով անհրաժեշտ էր ստեղծել օրենսդրական բոլորովին նոր համակարգ, որը պետք է ապահովեր երկրի իրավակարգն ու օրինականությունը, սահմաներ պետական մարմինների, պաշտոնատար անձանց և քաղաքացիների բնականոն գործունեության համար անհրաժեշտ նրաշխիքներ: Օրենսդրական համակարգ ստեղծելը մեծածավալ և երկարատև ժամանակ պահանջող աշխատանք է, և այդ պատճառով Հայաստանի խորհուրդը 1918 թվականի դեկտեմբերի 6-ին ընդունեց, որինք, որի համաձայն Հայաստանի տարածքում ժամանակավորապես պետք է գործեին նախկին ռուսական կայսրության, ժամանակավոր կառավարության, Անդրկովկասի կոմիսարիատի և Մեյմի օրենքները Հայաստանի խորհրդի գլուխկալություններով և լրացումներով: Հայաստանի խորհրդի այդ օրենքով գործողության մեջ էին դրվում բազմաթիվ, հաճախ միմյանց հակասող օրենսդրական ակտեր, որի հետևանքով Հայաստանում ստեղծվում էր օրենսդրական քաոս: Այդ օրենսդրական քաոսում կարող էր կողմնորոշվել միայն դատական իշխանության անկախ մարմինների համակարգը: Բնականաբար, Հայաստանի խորհուրդը 1918 թվականի դեկտեմբերին ընդունեց դատական իշխանության կազմավորման համար խիստ կարևոր մի քանի օրենսդրական ակտեր: Այդ օրենսդրական ակտերից էր Դատական հիմնարկությունների մասին օրենքը, որով Հայաստանում ստեղծվում էր եռաստիճան դատական համակարգ: Նշված օրենքով Հայաստանում ստեղծվեցին հաշտարար դատարաններ, Երևանի ջրջանային դատարանը իր քաղաքական և վարչական բաժանմունքներով և դատական վճռաբեկ դատարանը, ինչպես նաև դատական գերագույն ատյան Մենատը, որն ուներ քաղաքացիական և քրեական բաժանմունքներ: Ստեղծվեց նաև երդվյալ ատենակալների հատարան, որը քննելու էր ծանր հանցագործությունների գործերը և գործելու էր Երևանի ջրջանային դատարանին կից: Այսպիսով, «Դատական հիմնարկությունների մասին» օրենքով ամբողջանում էին Հայաստանում իշխանության երեք թևերը՝ օրենսդիր, գործադիր և

դատական իշխանությունները: Ընդ որում, իշխանության երեք թևերը բաժանված էին: Այդ մասին է վկայում մասնավորապես այն, որ դատական մարմինների՝ բարձր դիրք գրավող պաշտոնյաներին նշանակում էր Հայաստանի խորհուրդը, չնայած նախապես առաջարկվում էր, որ նրանց նշանակի կառավարությունը:

Հայաստանի խորհուրդը, ծավալելով օրենսդրական գործունեություն, ընդունել է մի շարք օրենքներ, որոնք ուղղված էին երկրի տնտեսության, սոցիալական ոլորտի, մշակույթի և կրթության հարաբերությունների կարգավորմանը: Իր տասնամյա գործունեության ընթացքում Հայաստանի խորհուրդը, ընդհանուր առմամբ, ընդունել է 116 օրենք, որոնցից կարևորներն են վերը հիշատակված դատական իշխանության մարմինների և արդարադատության իրականացման վերաբերյալ օրենքները, մենաշնորհի, անօրինական զենքի բռնագրավման, դպրոցների, գաղթականների խնամատարության վերաբերյալ օրենքները և այլ օրենսդրական ակտեր⁶: Այդ օրենսդրական ակտերի մեջ առանձնանում է, հատկապես, Հայաստանի խորհրդի կողմից 1919 թվականի մարտի 31-ին ընդունված՝ Հայաստանի խորհրդարանի ընտրությունների մասին օրենքը, որը կարևոր քայլ էր Հայաստանում պառլամենտարիզմի հետագա զարգացման գործում: Այդ օրենքի համաձայն՝ Հայաստանի խորհրդարանի ընտրությունները պետք է կատարվեին ընդհանուր, ուղղակի, հավասար, համամասնական և գաղտնի քվեարկությամբ: Հայաստանի խորհրդարանը պետք է կազմված լիներ ութսուն պատգամավորից: Օրենքի համաձայն՝ ընտրության իրավունք ունեին Հայաստանի բոլոր բնակիչները՝ անկախ ազգությունից, կրոնական պատկանելիությունից և սեռից: Ամեն ընտրող կարող էր ընդգրկվել միայն մեկ ընտրացուցակում: Ընտրական իրավունք ունեին Հայաստանի քսան տարին լրացած բնակիչները: Հայ գաղթականները նույնպես ունեին ընտրական իրավունք՝ առանց սահմանափակման: Ընտրելու իրավունքից զրկված էին զինվորական ծառայության մեջ գտնվող անձինք, ինչը ապաքաղաքականացնում էր բանակը և զինվորականներին հեռու էր պահում քաղաքական գործունեությունից: Հարկ է նշել, որ

⁶ Նույն տեղում, էջ 173:

Հայաստանի խորհրդի կողմից ընդունված օրենսդրական ակտերի մեծ մասն ուներ ոչ թե նորմատիվ, այլ անհատական իրավական բնույթ:

Դեռևս 1919 թվականի սկզբներից Հայաստանի խորհրդում սուր հակասություններ էին առաջացել տարբեր քաղաքական ուժերի միջև, ինչը խոչընդոտում էր խորհրդի կողմից արդյունավետ գործունեություն իրականացնելուն: Այդ էր պատճառը, որ 1919 թվականի ապրիլի 27-ին Հայաստանի խորհուրդն ընդունեց օրենք՝ իրեն մեկ ամսով արձակուրդ տալու մասին: Այդ օրենքով Հայաստանի խորհրդի արձակուրդի ընթացքում նրա բոլոր իրավունքները փոխանցվում էին կառավարությանը: Ընդ որում, կառավարությանը հանձնարարվում էր արտակարգ կարևորություն ունեցող դեպքերում հրավիրել Հայաստանի խորհրդի արտակարգ նիստ: Այդպես ձևավորվեց օրենսդիր մարմնի լիազորությունները գործադիր մարմնին՝ կառավարությանը զիջելու արատավոր պրակտիկան: Ստանալով Հայաստանի խորհրդի բոլոր իրավունքները՝ կառավարությունը բուռն գործունեություն ծավալեց: Բավական է ասել, որ մեկ ամսում՝ 1919 թվականի ապրիլի 27-ից մինչև մայիսի 27-ը, կառավարությունն ընդունեց շուրջ հարյուր օրենք: Այդ օրենքների մեջ իրենց կարևորությամբ առանձնանում էին երկու օրենք՝ «Միացյալ և անկախ Հայաստանի անկախության» և «Հայաստանի խորհրդի համալրման մասին» օրենքները: Երկրորդ օրենքով Հայաստանի խորհուրդը պետք է համալրվեր արևմտահայության ներկայացուցիչներով: Այս օրենսդրական ակտերը սուր պայքար առաջացրեցին Հայաստանի խորհրդի ներսում՝ ընդվզեցին Հայաստանի ժողովրդական կուսակցությունը, ինչպես նաև խորհրդի ձախակողմյան թևի կուսակցությունները: Պատճառն այն էր, որ կառավարությունն իրեն համարում էր Միացյալ Հայաստանի կառավարություն, մինչդեռ այն կազմված էր բացառապես ռուսահայերից, առանց թուրքահայերի: Սա դիտվում էր որպես պետական հեղաշրջում: 1919 թվականի հունիսի 5-ին կայացավ Հայաստանի խորհրդի վերջին նիստը, որտեղ ընդունվեց օրենք՝ «Հայաստանի խորհրդի պարապմունքները դադարեցնելու մասին»: Սակայն դա այլևս կարևորություն չունեի՝ Հայաստանը նախապատրաստվում էր պառլամենտի նոր ընտրություններին: Այդ ընտրությունների կազմակերպման համար ստեղծվել էին

կենտրոնական, գավառական, շրջանային, քաղաքային, գյուղական և թաղամասային ընտրական հանձնաժողովներ:

Դեռևս 1919 թվականի մայիսին ներկայացվել և գրանցվել էին ընտրական յոթ քաղաքական և ազգային խմբերի՝ ցուցակներ: Ընտրությունները պետք է անցկացվեին ըստ ընտրական ցուցակների՝ համամասնական ընտրական համակարգով: ՀՀ Դաշնակցությունը ներկայացրել էր պատգամավորության 120 թեկնածուների ցուցակ, Հայ ժողովրդական կուսակցությունը՝ 60, Էսեռները՝ 35, քրդերը՝ 2, ասորիները՝ 6, Արագածոտնի անկուսակցական գյուղացիների միությունը՝ 18, Թուրք ազգաբնակչությունը՝ 16: Սոցիալ դեմոկրատները բոյկոտեցին ընտրությունը և հրաժարվեցին ներկայացնել պատգամավորության իրենց թեկնածուների ցուցակը: Հետագայում ընտրություններին մասնակցելուց հրաժարվեց նաև Հայ ժողովրդական կուսակցությունը: Սոցիալ դեմոկրատները բոյկոտեցին ընտրությունները, քանի որ համոզված էին, որ հաջողություն չեն ունենալու, մինչդեռ Հայ ժողովրդական կուսակցությունը ընտրություններին մասնակցելուց հրաժարվելու լուրջ պատճառ չունեին: Պատճառը, թերևս, այդ կուսակցության Երևանի և Թիֆլիսի ղեկավար մարմինների միջև առկա սուր հակասություններն էին:

Ընտրությունները կայացան 1919 թվականի հունիսի 21-23-ը: Հայաստանի օրենսդիր մարմնի ընտրություններում բացարձակ հաղթանակ տարավ ՀՀ Դաշնակցությունը: Օրենսդիր մարմնում այդ կուսակցությունը ունեցավ 72 պատգամավոր, Էսեռները՝ 4 պատգամավոր, Արագածոտնի անկուսակցական գյուղացիական միությունը՝ մեկ պատգամավոր, Թուրք ազգաբնակչությունը՝ երկու պատգամավոր, եզդիները՝ մեկ պատգամավոր:

Հայաստանի նորընտիր օրենսդիր մարմինն անվանվեց «Հայաստանի պառլամենտ», որի հանդիսավոր բացումը տեղի ունեցավ 1919 թվականի օգոստոսի 1-ին: Մի քանի օր անց՝ 1919 թվականի օգոստոսի 5-ին տեղի ունեցավ Հայաստանի պառլամենտի առաջին պաշտոնական նիստը, որը հաստատեց պատգամավորների մանդատները, ընտրեց պառլամենտի նախագահություն: Հայաստանի պառլամենտի հաջորդ նիստում վարչապետ ընտրվեց Ալեքսանդր Խատիսյանը, ում հանձնարարվեց կազմել նոր կառավարություն: Օրենսդրական գործունեության կազմակերպման համար Հայաստանի պառլամենտը կազմեց նաև 12 հանձնաժողով:

Հայաստանի պառլամենտի ընտրությունները և նրա ղեկավար մարմինների ձևավորումը նշանավորեցին Հայաստանում պառլամենտարիզմի զարգացման նոր փուլը: Հայաստանի պառլամենտը միապալատ էր: Նրա լիազորությունների ժամկետը, ինչպես և Հայաստանի խորհրդի պարագայում, սահմանված չէր: Հայաստանի պառլամենտն ուներ անժամկետ լիազորություններ, և նրա լիազորությունները կարող էին դադարեցվել միայն ինքնալուծարման միջոցով:

Հայաստանի պառլամենտի ընտրություններից հետո երկրում վերջնականապես հաստատվեց պետական կառավարման պառլամենտական ձև: Պառլամենտն ընտրում էր վարչապետ, որը կազմում էր կաբինետ: Վարչապետն ու իր կաբինետը հաշվետու էին պառլամենտին:

Հայաստանի պառլամենտում մեծամասնություն էր կազմում ՀՀ Դաշնակցությունը: Վերջինս իր ներքին և արտաքին քաղաքականությունն իրականացնում էր պառլամենտի դաշնակցական խմբակցության միջոցով: ՀՅԴ Բյուրոն, ըստ էության չէր միջամտում կառավարության գործունեությանը և կառավարական գործառույթներ չուներ: Այդ կապակցությամբ հարկ է նշել, որ իր 1919 թվականի սեպտեմբերի 27-ի ինտերդի համագումարում ՀՅԴ-ն ի թիվս այլ հարցերի անդրադարձել է նաև կուսակցական աշխատանքների կազմակերպման հարցերին և սահմանել, որ կառավարության դաշնակցական անդամները միաժամանակ կուսակցական որևէ մարմնի անդամ չեն կարող լինել: Դա նշանակում է, որ ՀՅԴ ղեկավար մարմնի Բյուրոյի անդամները չէին կարող լինել նաև կառավարության անդամ: Դա վկայում է այն մասին, որ ՀՅԴ-ն իսկական պառլամենտական կուսակցություն էր և որդեգրել էր ժողովրդավարական գործելակերպ: Սակայն դաշնակցական հեղինակավոր և ազդեցիկ գործիչներ մերժում էին այդ գործելակերպը՝ գտնելով, որ Բյուրոն պետք է միջամտի կառավարության գործերին: Հետագայում ինչպես ՀՅԴ շարքերում, այնպես էլ պառլամենտի դաշնակցական անդամների շրջանում պետական իշխանության կազմակերպման վերաբերյալ աստիճանաբար ձևավորվեց երկու հակադիր մոտեցում: Այդ մոտեցումներից մեկը պետական իշխանության կազմակերպման պառլամենտական և ժողովրդավարական ձևն էր, մյուսը՝ կուսակցական-

ամբողջատիրական ձևը, ըստ որի կառավարությունը պետք է անմիջականորեն ղեկավարվի կուսակցության և նրա Բյուրոյի կողմից: Փաստորեն, դաշնակցական գործիչների մի մասը գտնում էր, որ Հայաստանը պետք է լինի իրավական պետություն, մյուս մասը, թե հարկ եղած դեպքում կառավարությունը և կուսակցությունը պետք է անտեսեն գործող օրենքները և ձեռնարկեն հեղափոխական միջոցառումներ: Երկրորդ մոտեցման կողմնակիցներն առաջարկում էին, ըստ էության, հրաժարվել պետական իշխանության պառլամենտական և ժողովրդավարական ձևից, այսինքն՝ օրինականությունը փոխարինել նպատակահարմարությամբ: Այս մոտեցումը խիստ վտանգավոր էր և կարող էր հանգեցնել ընդհանրապես պետականության կործանմանը և քաոսի հաստատմանը:

Եվ այսպես, 23 Դաշնակցությունը գերիշխող էր Հայաստանի պառլամենտում, սակայն Հայաստանի առաջին հանրապետությունում պառլամենտարիզմի մասին ամբողջական պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է անդրադառնալ նաև արտախորհրդարանական քաղաքական ուժերին: Այդ քաղաքական ուժերն, ընդհանուր առմամբ ընդդիմադիր էին 23 Դաշնակցությանը և Հայաստանի պառլամենտին: Նրանց մի մասը ոչ միայն ամեն կերպ խոչընդոտում էր պառլամենտարիզմի, այլև հայկական նորանկախ պետականության կայացմանը: Արտախորհրդարանական քաղաքական ուժերից հայկական պետականության համար ամենավտանգավորը բոլշևիկներն էին:

Դեռևս 1919 թվականի գարնանը Երևանում հիմնադրվել էր կոմունիստական երիտասարդական «Մայարտակ» միությունը: Բացի այդ, 1919 թվականին մի քանի հարյուր բոլշևիկ, հալածվելով Վրաստանի և Ադրբեջանի իշխանությունների կողմից, ապաստանեցին Հայաստանում: Չնայած հակապետական գործունեություն չծավալելու իրենց խոստումին, նրանք սկսեցին ակտիվ հակահայկական գործունեություն: 1919 թվականի սեպտեմբերին Երևանում գումարվեց Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների խորհրդակցություն, որն ստեղծեց իր կենտրոնական ղեկավար մարմինը՝ Հայաստանի կոմիտեն, որը հայտնի է Արմենկոմ անվամբ:

Արտախորհրդարանական մյուս քաղաքական ուժը սոցիալ-դեմոկրատ մենշևիկներն էին, որոնք փոքրաթիվ էին և Հայաստանում սոցիալական բազա չունեին: Նրանք որդեգրել էին ընդգծված ինտերնացիոնալիստական և ապագային քաղաքական ուղեգիծ: Դեռևս Հայաստանի անկախության հռչակումից հետո Բաքվից Երևան էր տեղափոխվել սոցիալ-դեմոկրատական բանվորական հայկական կազմակերպությունը, որը հայտնի է, այսպես կոչված «Սպեցիֆիկներ» անվամբ: Ահա այս «Սպեցիֆիկները» միացան սոցիալ-դեմոկրատ մենշևիկներին և 1920 թվականի հունվարին ստեղծեցին Հայաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցությունը (ՀՄԴԲԿ): Վերջինս, չմերժելով Հայաստանի անկախ պետականության գաղափարը, ուներ սոցիալիստական կողմնորոշում և կողմնակից էր սոցիալ-դեմոկրատական գործելակերպին:

Արտախորհրդարանական ազդեցիկ կուսակցություն էր Հայ ժողովրդական կուսակցությունը: Այս կուսակցությունն անխնա քննադատում էր ՀՅԴ-ին և կառավարությանը, պնդում էր, թե նրանք Հայաստանը տանում են կործանման, հայտարարում էր, թե Հայաստանի պառլամենտը լեգիտիմ մարմին չէ: Չնայած Հայ ժողովրդական կուսակցությունն ուներ ընդգծված ընդդիմադիր կեցվածք, այնուամենայնիվ, Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարակից էր և գտնում էր, որ Հայաստանը պետք է լինի իրավական, ժողովրդավարական, պառլամենտական պետություն:

Արտախորհրդարանական կուսակցությունների շարքին էին դասվում նաև Հայ ռամկավարները, որոնք արտահայտում էին արևմտահայության շահերը: Այս կուսակցությունը նույնպես, ընդհանուր առմամբ ընդդիմադիր էր ՀՅ Դաշնակցությանը:

Հայաստանի պառլամենտը, իրականացնելով իր օրենսդիր գործառույթը, 1919 թվականի ընթացքում ընդունել է 117 օրենքներ, որոնցում գերակշռել են ֆինանսահարկային և բյուջետային բնույթ ունեցող օրենքները: Նա ընդունել է այդպիսի 70 օրենք: Մնացած 47 օրենքները անհատական իրավական ակտեր են եղել: 1920 թվականի հունվար-մայիս ամիսներին Հայաստանի պառլամենտն ընդունել է 85 օրենք, որոնցից 52 օրենք եղել են ֆինանսավարկային և բյուջետային, իսկ 11 օրենք անհատական իրավական բնույթ են ունեցել: Ընդհանուր առմամբ, հայաստանի պառլամենտի կողմից ընդունված իրավական ակտերից միայն 22 օրենքներ են ուղղված եղել հասարակական

հարաբերությունների կարգավորմանը, այսինքն՝ եղել են նորմատիվ-իրավական ակտեր⁷: Հայաստանի պառլամենտի ընդունած իրավական ակտերից ուշադրության են արժանի, հատկապես, «Հայաստանի Հանրապետության տարածքում երդվյալ ատենակալների դատարան մտցնելու մասին», «Պետական լեզվի մասին», «Եկեղեցին պետությունից անջատելու մասին» օրենքները:

1920 թվականի ապրիլի սկզբին ՀՀ Դաշնակցությունը, ոտնահարելով իր իսկ սկզբունքները, պառլամենտի դաշնակցական խմբակցությունից պահանջեց, որ գործադիր իշխանությունը հանձնվի ՀՀԴ Բյուրոյին: Հայաստանի պառլամենտի 1920 թվականի ապրիլի 3-ի նիստում ՀՀԴ պահանջը բավարարվեց: Բյուրոյի չորս անդամներ հայտնվեցին կառավարության կազմում և ստացան նախարարական պորտֆելներ: Դա առաջին ծանր հարվածն էր Հայաստանում պառլամենտարիզմի կայացմանը:

1920 թվականի մայիսին Հայաստանը հայտնվեց ներքաղաքական և արտաքին քաղաքական ծանր իրավիճակներում: Ակտիվացան հայերի ներքին և արտաքին թշնամիները: Բոլշևիկները, Հայաստանի թուրք բնակչության հետ ձեռք-ձեռքի տված, ապստամբություններ էին բարձրացնում և կոչ էին անում տապալելու դաշնակցական կառավարությունը: Բոլշևիկյան Ռուսաստանը խորացնում և ընդլայնում էր իր համագործակցությունը թուրք քեմալականների հետ: Հայկական գործադիրությունները նահանջում էին Արցախից և Զանգեզուրից:

ՀՀ Դաշնակցությունը, նկատի ունենալով հայոց պետականության գլխին կախված վտանգը, պահանջեց, որ Հայաստանում ամբողջ իշխանությունն անցնի իրեն: 1920 թվականի մայիսի 5-ի նիստում Հայաստանի պառլամենտը քննարկեց իշխանությունը ՀՀԴ-ին հանձնելու հարցը և դրական լուծում տվեց: Կառավարությունը հրաժարական ներկայացրեց: Նոր վարչապետ ընտրվեց ՀՀԴ Բյուրոյի անդամ Համազասպ Օհանջանյանը: Վերջինս իր նոր կաբինետի կազմում ընդգրկեց ՀՀԴ Բյուրոն՝ ամբողջապես: Հայաստանի պառլամենտն այդ նիստում որոշում կայացրեց նաև մեկ ամսով արձակուրդ գնալու և պառլամենտի բոլոր իրավունքները

⁷ Վաղարշյան Ա., Հայաստանի Հանրապետության օրենսդիր իշխանության համակարգը «1918-1920», Եր., 2012, էջ 169:

կառավարությանը հանձնելու մասին: Հայաստանի պառլամենտը, իր գործունեությունը դադարեցնելու և ամբողջ իշխանությունը Բյուրո-կառավարությանը հանձնելու որոշում կայացնելով, Հայաստանում, ըստ էության, հաստատեց կուսակցական մենիշխանություն: Ճիշտ է, այդ որոշումը պայմանավորված էր Հայաստանի ներքին և արտաքին ծանր վիճակով՝ բոլշևիկների և թուրք ազգաբնակչության ապստամբություններ, Ադրբեջանի, բոլշևիկյան Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի հարձակման վտանգ, սոցիալ-տնտեսական ծանր պայմաններ, այնուամենայնիվ, նշված որոշմամբ Հայաստանում վերջ տրվեց պառլամենտարիզմին: Հայաստանում կուսակցական մենիշխանության հաստատումը և պառլամենտարիզմի վախճանը կարելի է համարել այդ ժամանակաշրջանում հայոց պետականության անկման պատճառներից մեկը:

Բյուրո-կառավարությունը, անցնելով իշխանության գլուխ, ձեռնարկեց մի շարք արտակարգ միջոցառումներ, որոնք ուղղված էին Հայաստանի ներքին կյանքը կարգավորելուն: Բյուրո-կառավարությունը Հայաստանում հիմնեց արտակարգ դատարաններ, որոնց դատավճիռները պետք է հաստատեր զինվորական նախարարը: Դրանով իսկ դատական իշխանությունը ենթարկվեց գործադիր իշխանությանը, ինչը բացառում էր դատարանների անկախությունը: Պետական դավաճանության, ինչպես նաև չարամիտ սպեկուլյացիայի համար սահմանվեց մահապատիժ: Այնուհետև, օրենքով արգելվեց, նախ, պետական ծառայողների և բանվորների սաբոտաժը, ապա այդ օրենքի գործողությունը տարածվեց նաև հասարակական և մասնավոր հիմնարկ-ձեռնարկությունների ծառայողների և բանվորների վրա:

1920 թվականի հունիսի 5-ին, երբ լրացավ Հայաստանի պառլամենտի արձակուրդի ժամկետը, գումարվեց նրա արտակարգ նիստը: Պատճառաբանելով, որ Հայաստանի ներքաղաքական կյանքը կայացնելու գործում դեռ շատ անելիքներ ունի, Բյուրո-կառավարությունը պառլամենտին առաջարկեց երկարաձգել արձակուրդը: Իսկապես, այդ ժամանակ Հայաստանի առանձին վայրերում թուրք ազգաբնակչությունը շարունակում էր ապստամբություններ բարձրացնել: Հայաստանի պառլամենտն առանձնապես չընդդիմացավ այդ պահանջին և ընդունեց օրենք՝ իր արձակուրդը երկու ամսով երկարաձգելու մասին: Հետագայում, երբ

այդ ժամկետը լրացավ, Հայաստանի պառլամենտը նոր օրենք ընդունեց՝ իր արձակուրդը մինչև 1920 թվականի հոկտեմբերի 31-ը երկարաձգելու մասին:

1920 թվականի ամռանը ռուսական Կարմիր բանակը մուտք գործեց Ջանգեզուր և Նախիջևան, իսկ թուրքական բանակն առանց պատերազմ հայտարարելու հարձակվեց Հայաստանի վրա: Հայրենիքը հայտնվեց օրհասական վիճակում: Հայաստանի գլխին կախված վտանգը համախմբեց երկրի բոլոր հասարակականքաղաքական ուժերին, որոնք ձգտում էին պահպանել անկախությունը: Բացառություն կազմեցին միայն բոլշևիկ կոմունիստները, որոնք սկսեցին աշխատել հայկական կոմկոդ բանակը կազմալուծելու և Հայաստանի պարտությունն արագացնելու ուղղությամբ: Նրանք ամեն ինչ անում էին, որ «հեղափոխական թուրքական բանակի» զինվորները՝ հայ գյուղացիների, զինվորների և բանվորների «ընկերները», Հայաստանը մաքրեն «դաշնակ թալանչիներից»:

Թուրքական բանակը 1920 թվականի հոկտեմբերի 30-ին արդեն գրավել էր Կարսը և շարժվում էր դեպի Ալեքսանդրապոլ: Երբ Հայաստանի պառլամենտը 1920 թվականի նոյեմբերի 1-ին վերսկսեց աշխատանքը, պառլամենտը կրկին որոշում ընդունեց աշխատանքները մինչև 1920 թվականի դեկտեմբերի 1-ը դադարեցնելու և լիազորությունները կառավարությանը հանձնելու մասին:

1920 թվականի նոյեմբերի 7-ին ընկավ նաև Ալեքսանդրապոլը: Հայաստանի պառլամենտը 1920 թվականի նոյեմբերի 11-ին գումարեց արտահերթ նիստ, որը քննարկեց Հայաստանում ստեղծված ռազմաքաղաքական վիճակը: 1920 թվականի նոյեմբերի 18-ին թուրքերի հետ տասնօրյա զինադադարի համաձայնություն ձեռք բերվեց: 1920 թվականի նոյեմբերի 23-ին տեղի ունեցավ Հայաստանի պառլամենտի նոր արտահերթ նիստ, որում Բյուրո-կառավարությունը հրաժարական ներկայացրեց, և նոր վարչապետ ընտրվեց Սիմոն Վրացյանը: 1920 թվականի դեկտեմբերի 2-ին Հայաստանի ողջ իշխանությունը հանձնվեց Հայհեղկոմին: Հայաստանի պառլամենտը և կառավարությունը լուծարվեցին, և Հայաստանը հռչակվեց խորհրդային հանրապետություն: Հայաստանի առաջին հանրապետությունն ընկավ:

Հայաստանի առաջին հանրապետության և նրա բարձրագույն օրենսդիր մարմինների վերաբերյալ այս թոռուցիկ պատմական ակնարկը հնարավորություն է ընձեռնում բնութագրելու Հայաստանում պառլամենտարիզմի զարգացումը և բացահայտելու Հայաստանում պառլամենտարիզմի առանձնահատկությունները:

Հայաստանի առաջին հանրապետությունում զարգացման նախնական փուլում պառլամենտարիզմի գլխավոր առանձնահատկությունն այն էր, որ Հայաստանի խորհուրդը ձևավորվել էր ոչ թե ընտրությունների, այլ երկրի հիմնական քաղաքական ուժերի ներկայացուցչությունն ապահովվող նշանակումների միջոցով: Այսինքն՝ պառլամենտը, ոչ թե ժողովրդական, այլ կուսակցական ներկայացուցչական մարմին էր, ընդ որում Հայաստանի խորհուրդը ներկայացնում էր արևելահայ քաղաքական ուժերը: Ստեղծված աշխարհաքաղաքական պայմաններում դա միակ ճիշտ լուծումն էր:

Զարգացման նախնական փուլում պառլամենտարիզմի մյուս առանձնահատկությունն այն է, որ Հայաստանի խորհրդում ներկայացված քաղաքական ուժերի հարաբերակցությունը չէր արտացոլում նրանց իրական ազդեցությունը և հեղինակությունը Հայաստանում: Մասնավորապես, ձախ քաղաքական ուժերը սոցիալ-դեմոկրատ մենշևիկներ և բոլշևիկներ, էսեռներ, Հայաստանում չունեին ո՛չ համապատասխան սոցիալական բազա, ո՛չ էլ անհրաժեշտ հեղինակություն և ազդեցություն:

Զարգացման այս փուլում Հայաստանում պառլամենտարիզմի հաջորդ բնորոշ գիծն այն է, որ Հայաստանում ներկայացված քաղաքական ուժերի մեծ մասը ղեկավարվում էին դրսում գտնվող իրենց կենտրոնական ղեկավար մարմինների կողմից: Բնական է, որ այդ մարմինները չէին կարող իմանալ Հայաստանի կարիքները, ժողովրդի մեջ գերակայող տրամադրությունները, հետևաբար, նրանք չէին կարող քաղաքական ճիշտ որոշումներ կայացնել:

Նախնական փուլում պառլամենտարիզմի բնորոշ գծերից կարելի է համարել նաև այն, որ հայաստանի խորհրդում ներկայացված ձախ քաղաքական ուժերը և ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները ներկայացնում էին օտարածին շահեր և գործում էին Հայաստանի անկախությունը վերացնելու ու հայկական պետականությունը կործանելու ուղղությամբ: Այդպիսի գործելակերպ

էին որդեգրել ինչպէս սոցիալ-դեմոկրատ մենշևիկները, բոլշևիկները և եսէռները, այնպէս էլ թուրք ազգաբնակչության ներկայացուցիչները:

Զարգացման նախնական փուլում Հայաստանում պառլամենտարիզմի հաջորդ բնորոշ առանձնահատկությունն այն է, որ պետական մարմինների օրենսդիր և գործադիր գործառույթները հստակ տարանջատված չէին: Հայաստանի խորհուրդը, լինելով օրենսդիր մարմին, իրականացնում էր գործադիր գործառույթներ, իսկ գործադիր մարմինը՝ կառավարությունը, իրականացնում էր նաև օրենսդիր գործառույթներ:

Զարգացման այս փուլում Հայաստանում պառլամենտարիզմի մյուս առանձնահատկությունն այն է, որ օրենսդիր մարմինը Հայաստանի խորհուրդը, իր լիազորությունները զիջում էր գործադիր մարմինն՝ կառավարությանը:

Հայաստանում պառլամենտարիզմի զարգացման երկրորդ փուլը, որը համընկնում է Հայաստանի պառլամենտի գործունեության ժամանակաշրջանի հետ, ունի իր առանձնահատկությունները: Հիմնական առանձնահատկությունն այն է, որ ի տարբերություն Հայաստանի խորհրդի, որը ձևավորվել էր երկրի հիմնական քաղաքական ուժերի և ազգաբնակչության ներկայացուցչությունն ապահովող նշանակումների միջոցով, Հայաստանի պառլամենտը ձևավորվել էր ընդհանուր, հավասար, ուղղակի և գաղտնի քվեարկությամբ անցկացված ընտրությունների միջոցով՝ համամասնական ընտրակարգով: Դա, անշուշտ, առաջընթաց քայլ էր: Սակայն Հայաստանի պառլամենտը ժառանգել էր նաև զարգացման նախորդ փուլին բնորոշ մի շարք բացասական գծեր: Մասնավորապէս, ինչպէս և Հայաստանի խորհրդի պարագայում, Հայաստանի պառլամենտի և կառավարության միջև գործառույթների հստակ տարանջատում չկար: Հայաստանի պառլամենտը, ինչպէս Հայաստանի խորհուրդը, իրականացնում էր գործադիր գործառույթներ, իսկ կառավարությունը՝ օրենսդիր գործառույթներ: Բացի այդ, ինչպէս և Հայաստանի խորհուրդը, Հայաստանի պառլամենտը շարունակեց իր լիազորությունները կառավարությանը զիջելու արատավոր ավանդույթը: Ավելին, Հայաստանի պառլամենտը նպաստեց երկրում շփ Դաշնակցության դիկտատուրայի հաստատմանը, ինչը պառլամենտարիզմի սկզբունքների կոպիտ ոտնահարում էր:

Հայաստանի առաջին հանրապետությունում պառլամենտարիզմի առանձնահատկությունների մասին խոսելիս պետք է նկատի ունենալ հետևյալը: Իհարկե, ժամանակի հեռուներից կարելի է տեսնել Հայաստանում պառլամենտի և կառավարության գործունեության թերությունները, ցույց տալ պառլամենտարիզմի սկզբունքների ոտնահարումները և անխնա քննադատել, ինչպես դա անում են որոշ պատմաբաններ, քաղաքագետներ ու իրավագետներ: Մակայն չի կարելի անտեսել, որ պառլամենտարիզմը Հայաստանում, առաջին հանրապետության ժամանակաշրջանում, շատ կարճատև կյանք է ունեցել: Բացի այդ, Հայաստանը գտնվել է աշխարհաքաղաքական և ներքաղաքական ծայրագույն բարդ պայմաններում, երբ դրված է եղել հայ ժողովրդի լինել չլինելու հարցը: Հենց այդպիսի պայմաններում ստեղծվեցին հայրենական պառլամենտարիզմի հիմքերը, ինչը հայ ժողովրդի հասարակական-քաղաքական կյանքում կարևորագույն և առաջընթաց մի քայլ էր:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածը նվիրված է Հայաստանի առաջին հանրապետությունում պառլամենտարիզմի սկզբնավորմանը և զարգացմանը: Հիմնավորվել է, որ Հայաստանի առաջին հանրապետությունում պառլամենտարիզմն անցել է զարգացման երկու փուլ, որոնք անհրաժեշտաբար պայմանավորված են եղել աշխարհաքաղաքական, սոցիալ-տնտեսական և այլ պայմաններով: Եթե պառլամենտարիզմի սկզբնավորման փուլում գործել է կուսակցական ներկայացուցչության սկզբունքը, ապա երկրորդ փուլում պառլամենտարիզմը հիմնավորված է եղել ժողովրդական ներկայացուցչության վրա: Բացահայտվել են նաև պառլամենտարիզմի խեղումները և դրանց պատճառները:

Բանալի բառեր՝ պառլամենտարիզմ, իրավունք, օրենք, ընտրություններ, ժողովուրդ, կուսակցություններ, ժողովրդավարություն, պետականություն, ազգային:

ПАРЛАМЕНТАРИЗМ В ПЕРВОЙ РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Ованнес Степанян

*Доктор юридических наук, профессор,
ведущий научный сотрудник*

Института философии, социологии и права НАН РА

РЕЗЮМЕ

Статья посвящена становлению и развитию парламентаризма в Первой Республике Армения. В статье обосновывается, что в Первой Республике Армения парламентаризм прошел два этапа развития, которые обусловлены геополитическими, социально-экономическими и другими факторами. Если на этапе формирования парламентаризма действовал принцип партийного представительства, то на втором этапе развития, парламентаризм основывался на народном представительстве. В статье также раскрываются ошибки, искажения парламентаризма и их причины.

Ключевые слова: парламентаризм, право, закон, выборы, народ, партии, демократия, государственность, национальный.

PARPALENTARISM IN THE FIRST REPUBLIC OF ARMENIA

Hovhannes Stepanyan

Doctor of Law, Professor,

*Leading Researcher of the Institute of Philosophy,
Sociology and Law of NAS RA*

SUMMARY

The article is devoted to the formation and development of parliamentarism in the First Republic of Armenia. The article substantiates that in the First Republic of Armenia parliamentarism has passed two stages of development, due to geopolitical, socio-economic and other factors. If at the stage of formation of parliamentarism the principle of party representation was valid, then at the second stage of development, parliamentarism was based on people's representation. The article also reveals the mistakes, distortions of parliamentarism and their causes.

Key words: parliamentarism, right, law, elections, people, parties, democracy, statehood, national.